ՀՏԴ: 902(479.25)+947.925

DOI: 10.54503/0135-0536-2025.3-193

ՍՅՈՒՆՅԱՑ ԳԱՀԱԿԱԼ ԻՇԽԱՆՆԵՐԻ ԱՐԵՎԻՔԻ ՃՅՈՒՂԸ*

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Սյունիք, Արևիք, Մեղրի, գահակալ, իշխան, եկեղեցի, խաչքար, վիմագիր:

Ամփոփում

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանում վիմագրագիտական հավաքչական գործունեության, շրջագայությունների ընթացքում ընդօրինակված արձանագրությունների շարքում առանձնանում են X դարի առաջին կեսի չորս խաչքարային հիշատակագրություններ, որոնցում, ըստ էության, հիշատակվում են Սյունյաց լեռնաշխարհի պատմական Արևիք գավառի գահակալ իշխաններ: Նրանց մասին պատմագիրները լռում են:

Նախաբան

«Որտեղ լռում են պատմագիրները, այնտեղ աղաղակել են սկսում վեմերը»[1], – տնտեսագետ, հայագետ, պատմաբան Թադևոս Ավդալբեգյանի այս դիպուկ արտահայտությունը, կարծես, վերաբերում է ներկայացվող նյութին: Մեղրու տարածաշրջանում՝ Արևիք պատմագավառում, զարգացած միջնադարի վաղ փուլում (IX–X դդ.) գործած Սյունյաց իշխանների մասին, որքան էլ տարօրինակ է, պատմիչները լռում են, նախևառաջ՝ Սիսական աշխարհի պատմագիր Ստեփանոս Օրբելյանը: Լռության պատճառը, հավանաբար, նախընթաց մատենագրական տեղեկությունների բացակայությունն է, նաև վիմագրերին պատշաճ ուշադրություն չդարձնելը, թեև Օրբելյանը համարվում է առաջին պատմագիրը, ով որպես սկզբնաղբյուր օգտագործել է վիմական հիշատակագրությունները: Զենք կարծում, թե Սյունյաց մետրոպոլիտ, Հայոց Մեծաց պռոտոֆրոնտէս[2] Ստ. Օրբելյանը չի շրջագայել Արևիք գավառում. դեռևս Սսի

---

* Ներկայացվել է 05. XI. 2025 թ., գրախոսվել է 11. XI. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:

© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

[1] Ավդալբեգյան. 1927, 34:

[2] Պռոտոֆրոնտէս նշանակում է «Նախաթոռ պատրիարք» (Մալխասեանց. 1945, IV, 121), «առաջին աթոռակալ, եպիսկոպոսապետ» (Օրբելյան. 1986, 8): Ստ. Օրբելյանը, 1286 թ. եպիսկոպոս ձեռնադրվելով Կիլիկիայում, միաժամանակ ստանում է պռոտոֆրոնտեսի կարգավիճակ, որով իրավունք է ձեռք բերում Բուն Հայաստանում Ամենայն Հայոց կաթողիկոսի անունից կատարելու եպիսկոպոսական ձեռնադրություններ, որպեսզի վերջ տրվի այն արդահատելի երևույթին, երբ տեղի հոգևորա-

1243 թ. Բ կանոնական ժողովի ԺԲ կանոնով՝ թեմական եպիսկոպոսը պարտավոր էր տարին երկու անգամ շրջել իր թեմում[3]: Կարծում ենք՝ Ստ. Օրբելյանի աչքից պարզապես վրիպել են ներկայացվող վիմագրերը:

Արևիք գավառի հայտնի առաջին գահակալը

Պատմաբան Հայկարամ Ուլթմազյանի մակաբերած Սյունիքի ինքնուրույն գահակալ իշխանների հինգ ճյուղերին[4] ժամանակներ առաջ հավելել ենք վեցերորդը՝ Արևիք գավառինը[5]: Որպես կռվան ներկայացրել էինք Մեղրու Վանք գյուղի 1554 թ. վերականգնված Ս. Ստեփանոս եկեղեցու արևելյան պատի հարավային անկյունում արտաքուստ թեքությամբ ագուցված հետևյալ խաչքարի արձանագրությունը.



Թ⌊Վ ԻՆ⌋ :ՅԾԱ: (902), / Զ ՏՐ ՍՆ/ՊԱՏ ԻՇԵՑ/ԵՔ[6]:

Թվականի տառնավորը կիսաեղծ է: Գրել ենք նաև, որ «Առաջին հայացքից թվում է, թե Մնպատը (Սմբատը) հոգևորական է, քանի որ նրա անունը պատվի է արժանացած Տէր բառով: Բայց դա այդպես չէ»[7]: Հիշյալ ժամանակներում Տէր պատվանվամբ աղբյուրներում հիշատակվում են թեմական առաջնորդները և ըստ Հ. Ուլթմազյանի՝ գահակալ իշխանները[8], հետևապես Տ⌊էր⌋ Մնպատը Արևիք գավառի գահակալ իշխանն է: Հիրավի, Տաթևի վանքի 839–881 թթ. բոլոր կալվածագրերում, ինչպես նշել ենք[9], Տէր պատվանունով հանդես են գալիս միայն թեմական առաջնորդ եպիսկոպոսները (Տէր Դավիթ, Տէր Սողոմոն) և մի շարք իշխաններ[10]: Նաև նշել ենք՝ «Ինչ վերաբերում է առուծախի ու նվիրատվությունների վկա հոգևորականներին, ապա նրանք բոլորն անխտիր վերոհիշյալ կալվածագրերում հիշատակվում են միայն իրենց հոգևոր կոչումներով՝

կանները, պատճառ բունելով Կիլիկիայի հեռավորությունը, տարածաշրջանում պարբերաբար ծագող ռազմական բախումների հետևանքով ճանապարհների անվտանգությունը, երբեմն գնում ու եպիսկոպոս էին ձեռնադրվում Աղվանից հայրապետից, և որ ավելի վատթար է՝ Աղթամարի բանադրված քահանայապետից:

[3] *Օրմանեան. 2001, Բ, 1904:*
[4] *Ուլթմազյան. 1958, 26–27:*
[5] *Մանուչարյան. 2015, 57:*
[6] *Մանուչարյան. 2015, 57:*
[7] *Մանուչարյան. 2015, 57:*
[8] *Ուլթմազյան. 1958, 152:*
[9] *Մանուչարյան. 2015, 57:*
[10] *Օրբէլեան. 1910, 205–210, 216:*

երէց, աւագերէց, քահանայ, վանական, հայր (վանահայր), քորեպիսկոպոս՝ առանց «տէր» անվանապատվի»[11]:

Ենթադրելի է, որ 906 թ. Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու նավակատիքի մասնակից Հայոց թագավոր Սմբատ I Բագրատունին (890–914) Մեղրաձորի Կարճավան մեծ ավանը (ներկայիս Կարճևան գյուղը) գնել է ու նվիրել հիշյալ մենաստանի կաթողիկեին[12]՝ Արևիք գավառի գահակալ իշխան այս Սմբատից:

Սմբատը երկրորդ անգամ հիշատակվում է Լիճքվազ գյուղատեղիում, որտեղ մի խաչքարի վերնամասում պահպանվել է մեկ տող թերի արձանագրություն.



ՅԿ (911) ՍՄՊԱՏ ՅԱ ...[13]:

Արձանագրությունն ամբողջությամբ կարելի է վերականգնել հետևյալ կերպ.

ՅԿ (911), ՍՄՊԱՏ, ՅԱ⌈ՂԱԻԹՍ ԻՇԵՑԷՔ Ի ՏՐ⌉:

Սմբատին հաջորդած գահակալ իշխանները

Վանք գյուղում գտնվում է Սմբատին Արևիքի գահակալի պաշտոնում հաջորդած իշխանի խաչքարը՝ Ս. Ստեփանոս եկեղեցի տանող ճանապարհի ձախ եզրին[14].



Թ⌊ՎԻՆ⌋ Հ⌊ԱՅՈՑ⌋ ՅԿ/Է (918),
/ ԶՏՐ ՎԱՀ⌈ԱՆ / ԻՇԵՑԷՔ⌉:

---

[11] *Մանուչարյան. 2015, 57:*

[12] *Օրբէլեան. 1910, 210:*

[13] *Աբրահամյան. 2021, № 16, 16:*

[14] *Խաչքարը տեղում մեզ ցույց է տվել պատմաբան, Մեղրու տարածաշրջանի հնությունների հմուտ գիտակ Նաիրա Հայրապետյանը, որին հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:*

Երկու դեպքում էլ ՅԻՇԵՑԷՔ *ճիշտ ձևի փոխարեն վերականգնել ենք՝* ԻՇԵՑԷՔ՝ *հավատարիմ մնալով տեղի գրչական առանձնահատկություններին:*

Վերոհիշյալ Լիճքվազում է գտնվում հետևյալ խնդրակատար խաչքարը (գյուղատեղիի կենտրոնից կես կմ արևելք՝ դաշտի մեջ)՝ 11 տող արձանագրությամբ.



ՅՂ (941) ՀԱՅ⟦ՈՑ ⟧: / ԳԹԱՏՈՒ, / ԶՇ/ԱՄ/⌈Տ⌉ԻԿԻՆ/
Զ ՏՆ ՎԱ/ՍԱ/ԿԱ ԱՄ/ՈՒ/ՍԻՆ, ՅԱՂԱԻ/ԹՆ ԻՇԵՑԷՔ:



Այս արձանագրությունն ավելի վաղ հրատարակել է Է. Աբրահամյանը՝ աղճատումներով[15]*:*

Արձանագրությունն արժեքավոր է նաև նրանով, որ առաջին անգամ հիշատակվում է Արևիքի իշխանուհին՝ տիկին Շամը: Տիկնոջ անունը՝ Շամ, կարծում ենք, ծագում է արաբերեն «աշամմ»՝ أشمّ *բառից, որ նշանակում է «հպարտ»*[16]*:*

Եզրակացություն

Արևիք գավառի գահակալ իշխաններից առայժմ նշվածներն են հայտնի՝ Սմբատ (902, 911), Վահան (918), Վասակ (941). բոլորն էլ X դ. առաջին կես: Ենթադրում ենք, որ նրանք եղել են հայր, որդի, թոռ: Ուշադրության արժանի է այն փաստը, որ երեքն էլ կրում են Սյունյաց իշխանների անուններ: Դա էլ պատահականություն չէ, քանի որ սերում են Սյունյաց մեծ նահապետ Վասակից:

Այս շրջանում Արևիքի գահակալների իշխանանիստը Թաղամայրին (Թաղամիր) էր[17] *(գտնվում է Վանք գյուղից 3 կմ արևմուտք), քորեպիսկոպոսանիստը՝ Վանքը, Լեհվազը, հնարավոր է՝ ամառանոցը: Այդ ժամանակ Մեղրու բերդը դեռևս կառուցված չէր:*

---

[15] *Աբրահամյան. 2021, № 16, 16:*

[16] Баранов. 1977, 415.

[17] *Թաղամիր ստուգաբանվում է՝ «Թաղ» + «ամիր» (ամիր՝ արաբ. «իշխան» -أمير)=Իշխանաթաղ (տե՛ս Մանուչարյան. 2015, 58):*

Աշոտ Մանուչարյան – պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ վիմագրագիտություն, Միջնադարյան Հայաստանի քաղաքական պատմություն, Հայոց եկեղեցու պատմություն: Հեղինակ է 8 գրքի և շուրջ 90 հոդվածի: ORCID:0009-0007-7783-8580.
ashot.manucharyan.1959@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Է. 2021, Լիճքվազի հուշարձանները. – «Վարձք», № 16, էջ 14–17:

Ավդալբեգյան Թ. 1927, Մի գաղտնիք հայ վիմական արձանագրության մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 34 էջ:

Մալխասեանց Ստ. 1945, Հայերէն բացատրական բառարան, IV, Երեւան, ՀՍՍՌ Պետհրատ, 646 էջ:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան. 2001, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, Մայր Աթոռի հրատ., 1871–3894 սյուն:

Մանուչարյան Ա. 2015, Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX–XIV դդ.), Երևան, ԵՊՀ հրատ., 240 էջ:

Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց. 1910, Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպ, Օր. Ն. Աղանեանցի, 618 էջ:

Ստեփանոս Օրբելյան. 1986, Սյունիքի պատմություն (թարգմ., ներած. և ծանոթագր. Ա. Ա. Աբրահամյանի), Երևան, «Սովետական գրող», 616 էջ:

Ութմազյան Հ. 1958, Սյունիքը IX–X դարերում, Երևան, ԵՊՀ հրատ., 380 էջ:

Баранов Х. К. 1977, Арабско-русский словарь. М., изд. «Русский язык», 944 с.

АРЕВИКСКАЯ ВЕТВЬ СЮНИКСКИХ ПРЕСТОЛЬНЫХ КНЯЗЕЙ

АШОТ МАНУЧАРЯН

Резюме

Ключевые слова: Сюник, Аревик, Мегри, престольный, князь, церковь, хачкар, надпись.

В результате проведенных исследований к пяти ветвям правящих престольных князей Сюника нами была добавлена шестая – ветвь князей провинции Аревик. Основанием для этого послужила надпись на хачкаре, установленном в южном углу восточной стены церкви Св. Степаноса в селе Мегри Ванк, отреставрированной в 1554 году. В этой надписи, датированной 902 годом, упоминается «Владыка Смбат». Согласно исследованиям и купчим Татевского монастыря 839–891 годов, на данном историческом отрезке титул «Владыка» носили епархиальные епископы и престольные

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 3

князья. Тот же Смбат упомянут на хачкаре, датированном 911 годом и установленном в сельской местности Личкваз в Мегринском регионе.

В селе Ванк имеется еще один хачкар 918 года, на котором указан «Владыка Ваган». А в Личквазе находится великолепный хачкар 941 года в память о «Владыке Васаке». Надпись примечательна тем, что в ней отмечена княгиня Шам провинции Аревик. Полагаем, имя Шам происходит от арабского слова «ашамм» أشمّ, означающего «гордый».

Итак, приведем перечень престольных князей провинции Аревик: Смбат (902, 911), Ваган (918), Васак (941). Все они наречены именами сюникских князей и, возможно, являются представителями одного рода – отцом, сыном и внуком.

В этот период княжеским центром Мегринской провинции был Тагамир, расположенный в 3 километрах к западу от села Ванк, название которого этимологически восходит к армянскому слову «таг» («околоток») и арабскому слову «амир» -أمير – «князь». Духовным центром провинции Аревик было село Ванк.

Ашот Манучарян – к. и. н., доцент, старший научный сотрудник отдела эпиграфики Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: эпиграфика, политическая история средневековой Армении, история Армянской церкви. Автор 8 книг и около 90 статей.
ORCID:0009-0007-7783-8580. ashot.manucharyan.1959@mail.ru

AREVIK BRANCH OF THE SYUNIK THRONAL PRINCES

ASHOT MANUCHARYAN

S u m m a r y

Keywords: Syunik, Arevik, Meghri, throne, prince, church, khachkar, inscription.

In the result of the conducted research, we added the sixth branch to the five ones of the ruling royal princes of Syunik – branch of princes of the province of Arevik. The basis for this was the inscription on the khachkar installed in the southern corner of the eastern wall of the Church of St. Stepanos in the village of Vank restored in 1554, Meghri region. This inscription, dated 902, mentions “Lord Smbat”. According to the research and purchase contracts of the Tatev Monastery for the period from 839 to 891, the title of “Lord” was borne by diocesan bishops and throne princes. The same Smbat is mentioned on the khachkar, dated 911, which was erected in the rural area of Lichkvaz in the region of Meghri.

In the village of Vank, there is another khachkar from 918, with the mention of “Lord Vahan”. And in Lichkvaz there is a beautifully carved khachkar from 941 in the memory of “Lord Vasak”. The inscription is also notable for its

mention of Princess Sham of the Arevik province. We believe that the name Sham comes from the Arabic word "ashamm" أشمّ, which means "proud".

Thus, we have the following line of throne princes of the province of Arevik: Smbat (902, 911), Vahan (918), Vasak (941). All of them were named after Syunik princes and, possibly, were representatives of the same family- father, son, and grandson.

During this period, the princely center of the Meghri province was Taghamir, located three kilometers to the west of the Vank village, the name of which etymologically comes from the Armenian word "tagh" ("neighborhood") and the Arabic word "amir" - أمير – "prince". The spiritual center of the Arevik province was the village of Vank.

Ashot Manucharyan – Candidate of Historical Sciences, Associate Professor, Senior Researcher at the Institute of Archeology and Ethnography of NAS RA. Scientific interests: epigraphy, political history of medieval Armenia, history of the Armenian Churchs. Author of 8 books and about 90 articles.
ORCID:0009-0007-7783-8580. ashot.manucharyan.1959@mail.ru

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 3